ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» Հոկտեմբերի 2020թ. N ՄՊ/410-20

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՄԱՎԻՐԻ N 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ», «ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ԱՐԱՔՍԻ Զ.ՈՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՀՈՒՇԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ՄԱՐԳԱՐԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱՄԱՍԻԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԵՌԱՎԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասին 2-րդ, 3-րդ, 8-րդ և 9-րդ կետերով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշումը.

որոշում եմ՝

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիրի N 8 հիմնական դպրոց», «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց» «Բաղրամյանի միջնակարգ դպրոց» (Բաղրամյանի տարածաշրջան), «Արաքսի Զ. Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց», «Հուշակերտի միջնակարգ դպրոց» և «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ 2020 թվականի հոկտեմբերի 5-7-ը ներառյալ ուսումնական հաստատություններում կրթական գործընթացը կազմակերպել հեռավար՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի N 09-Ն որոշմամբ սահմանված կարգով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.10.2020 17:22:05 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230